Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիսի համայնքապետարանը հայտարարում է մրցույթ «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի Հայանիստ գյուղի մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար:

Նախադպրոցական ուսումնական հաստատության տնօրենը՝

ա/ իրականացնում է նախադպրոցական ուսումնական հաստատության ընթացիկ գործունեության ղեկավարումը,

բ/ պատասխանատու է նախադպրոցական կրթության պետական չափորոշչին և համապատասխան տարիքային խմբի ծրագրերին համապատասխան ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման համար,

գ/ պատասխանատու է հաստատություն հաճախող սաների առողջության պահպանման, կադրերի ընտրության, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի պահանջների պահպանման համար, ինչպես նաև օրենքով և համապատասխան կազմակերպության կանոնադրության սահմանված այլ պարտավորությունների ապահովման համար,

դ/ լիազոր մարմին է ներկայացնում նախադպրոցական ուսումնական հաստատության ֆինանսատնտեսական հաշվետվությունը, հաջորդ տարվա բյուջետային ֆինանսավորման հայտը,

ե/ կազմում է ուսումնական հաստատության հաստիքային ցուցակն ու ծախսերի նախահաշիվը և ներկայացնում համապատասխան լիազորված մարմնի հաստատմանը,

զ/ լիազոր մարմնի հավանությանն է ներկայացնում նախադպրոցական ուսումնական ուսումնական զարգացման ծրագիրը՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանված ձևաչափի և պահանջների համաձայն,

է/ իրականացնում է օրենքով և նախադպրոցական ուսումնական հաստատության կանոնադրությամբ իրեն վերապահված այլ լիազորություններ:

Մրցույթին մասնակցելու իրավունք ունի՝

1. Հայաստանի Հանրապետության այն գործունակ չափահաս քաղաքացին, ով ունի՝

ա/ բարձրագույն կրթություն

բ/ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանված կարգով վերապատրաստված և նախադպրոցական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք /հավաստագիր/,

գ/ հանրային ծառայության առնվազն 4 տարվա ստաժ կամ առվազն 5 տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ համապատասխան բնագավառի առնվազն 3 տարվա աշխատանքային ստաժ:

2. Տնօրենի ընտրության լրացուցիչ պայմաններն են՝

ա/տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն,

բ/ ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողություն,

գ/ համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն,

դ/աշխատանքի կազմակերպման և ղեկավարման անհրաժեշտ հմտություններ,

ե/ ենթակաների հետ վարվելու անհրաժեշտ էթիկայի կանոնների իմացություն,

զ/ առնվազն մեկ օտար լեզվի իմացություն,

Մրցույթին մասնակցելու իրավունք չունի, այն անձը, ով՝

ա/ դատապարտվել է հանցագործության կատարման համար, և նրա դատվածությունը մարված կամ վերացված չէ,

բ/ ում օրենքով արգելվել է ղեկավար պաշտոններ զբաղեցնել կամ զրկվել է որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից,

գ/ ով նախընթաց 3 տարիների ընթացքում եղել է սնանկանալու պատճառով լուծարված և իրենց պարտատերերի օրինական պահանջները չբավարարած կազմակերպության ղեկավար,

դ/ ներկայացրել է փաստաթղթեր, որոնք չեն համապատասխանում ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 26 մարտի 2020 թվականի թիվ 02-Ն հրամանով հաստատված կարգի 12-րդ կետով սահմանված պահանջներին, լրիվ չեն կամ թերի են,

ե/ 65 տարին լրացած քաղաքացիները:

* Մրցույթը կկայանա 2024 թվականի օգոստոսի 1-ին՝ ժամը 12:00-ին, Մասիսի համայնքապետարանի շենքում/ ք. Մասիս, Կենտրոնական հրապարակ 4 /:

* Դիմումները ներկայացնել Մասիսի համայնքապետարանի վարչական շենք, հասցե՝ Կենտրոնական հրապարակ թիվ 4, 4-րդ հարկ, 415 աշխատասենյակ, քարտուղարության, անձնակազմի կառավարման և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժին, երկուշաբթիից ուրբաթ, ժամը 10:00-ից մինչև 18:00-ն: Դիմումներն ընդունվում են մինչև սույն թվականի հուլիսի 17-ը ներառյալ:

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը.

- ☑ Դիմում.
- ☑ Մեկ լուսանկար՝ 3x4 չափսի.
- ☑ Քաղվածք աշխատանքային գրքույկից կամ տեղեկանք աշխատանքային գործունեության մասին.
- ☑ Նախադպրոցական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք /հավաստագիր/.
- ☑ Ինքնակենսագրություն.
- ☑ Անձնագրի կամ նույնականացման քարտի, բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթղթի, արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի բնօրինակները և պատճենները:
- ☑ Տեղեկանք մշտական բնակության վայրից.
- ☑ Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում).

Փաստաթղթերը ներկայացնել անձամբ, անձը հաստատող փաստաթղթով:

Տնօրենի թափուր պաշտոնի հիմնական աշխատավարձի չափը կազմում է 140.000 ՀՀ դրամ:

Հեռ. /236/-4-30-40

Էլեկտրոնային հասցե՝ masiskadrer@inbox.ru